ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 113-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. 2020 թվականի հունվարի 22-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումը:

Սույն գործով դիմողը վիճարկել էր նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը: Սահմանադրական դատարանի 2020 թվականի մայիսի 12-ի ՍԴԱՈ-100 աշխատակարգային որոշմամբ այդ մասով գործի վարույթը կարճվել է:

2. Դիմողը գտնում է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի (Օրենսգիրք) 113-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է Սահմանադրությանը:

Ըստ դիմողի՝ այլ աշխատանք առաջարկելը՝ որպես աշխատանքային պայմանագիրը Օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով լուծելու նախապայման սահմանված լինելը, խախտում է Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքը, քանի որ հիմք չկա պնդելու, թե ինչու՞ այլ աշխատանք առաջարկելը չի կարող դիտվել որպես գործատուի առանձին պարտավորություն, և ինչու՞ այլ աշխատանք առաջարկելու պարտավորության հնարավոր խախտումը, օրենքի այլ դրույթների լույսի ներքո, կարող է կամ պետք է հիմք հանդիսանա բուն խախտմանը և դրա նյութական հետևանքներին չհամապատասխանող վերականգնում հայցելու և ստանալու համար:

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «**մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը ... համապատասխան» բառակապակցության մասով**՝ այն առումով, որ սույն նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, ինչի արդյունքում հնարավոր չէ հասկանալ, թե արդյո՞ք սույն նորմը պարտավորեցնում է գործատուին առաջարկել աշխատողին այնպիսի այլ աշխատանք, որը պահանջում է աշխատողի մասնագիտական պատրաստվածությունից տարբերվող (այդ թվում՝ էապես տարբերվող), աշխատողի որակավորումից ավելի ցածր որակավորում (այդ թվում՝ էականորեն ավելի ցածր)՝ համապատասխանաբար նախատեսելով ավելի ցածր վարձատրություն (այդ թվում էականորեն ավելի ցածր)...»:

3. Պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

Ըստ պատասխանողի՝ աշխատանքի իրավունքի կարևոր բաղադրիչներից է աշխատատեղի պաշտպանության իրավունքը, և վերջինիս վերաբերող կանոնակարգումների բովանդակությունը մեծապես հիմնված է աշխատանքից կամայականորեն կամ անարդարացիորեն չազատվելու իրավունքի և աշխատանքային հարաբերությունների կայունության և անխախտելիության սկզբունքների վրա:

Գործատուի՝ ազատվող աշխատողներին այլ աշխատանք առաջարկելու պարտականության սահմանումը բխում է աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքից: Եվ որևէ պատճառով նախկին աշխատանքը կատարելու անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքի բովանդակությունը չպետք է խաթարվի, ուստի օրենսդիրը հետամուտ է եղել, որպեսզի նման դեպքերում գործատուի և աշխատողի միջև ծագած աշխատանքային հարաբերությունները պահպանվեն նույնիսկ այլ պայմաններով, իհարկե, աշխատողի ցանկությամբ:

Պատասխանողը նշում է, որ օրենսդիրը, գործատուի համար նման պարտականություն նախատեսելով, փորձել է արդարացի հավասարակշռություն ապահովել գործատուի շահերի և աշխատանքից ազատված աշխատողի իրավունքների և օրինական շահերի միջև:

4. Դիմումի, դատական ակտերի և լրացուցիչ նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման, քանի որ դիմողը, ըստ էության, բարձրացնում է վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարց: Դիմողի, մասնավորապես, 2020 թվականի հունիսի 12-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիրքորոշմամբ ընդգծվում է, որ խնդրո առարկա ԵԿԴ/4969/02/15 դատական գործով «…դատարանը որևէ ձևով չի հիմնավորել և պատճառաբանել աշխատանքի համապատասխանությունն աշխատողի մասնագիտական պատրաստվածությանը և որակավորմանը: … Գործը նոր քննության ուղարկելուց հետո **որևէ դատական ատյան երբևէ չի պարզել թափուր պաշտոնների համապատախանությունը** կրճատված աշխատողների <u>մասնագիտական պատրաստվածությանը, որակավորման և առողջական վիճակին</u>: <u>Դրա փոխարեն</u> բոլոր դատական ատյանները նախադատելի են համարել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի գնահատականը, ինքնուրույն չհետազոտելով վերոհիշյալ ակնհայտ անհամապատասխանության հանգամանքը: Դա …. ոչ միայն անթույլատրելի էր օրենքի

տեսանկյունից, այլ նաև հանգեցրել էր չպատճառաբանված և չհիմնավորված դատական ակտերի կայացմանը....»:

Բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները Սահմանադրական դատարանը մերժում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

16 հունիսի 2020 թվականի
ՍԴԱՈ-125